«Ֆաթհ» և «Համաս» շարժումների հակամարտությունը. գաղափարախոսությունների և շահերի բախում

ԱԲՈՒ ԶԱԻԴ ԱԼԻ ՄՈՒՍԱ
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում են պաղեստինաիսրայելական հակամարտության կարգավորման առումով առանցքային նշանակություն ունեցող խնդիրներից մեկի՝ պաղեստինյան «Ֆաթհ» և «Համաս» շարժումների տարաձայնությունների առաջացման պատճառները, դրանց հաղթահարման փորձերի անհաջողության խոչընդոտներն ու հնարավորությունները: Այդ տարաձայնությունների հիմքը հակամարտության մյուս կողմի՝ Իսրայելի հետ բանակցությունների և կարգավորման վերաբերյալ միջազգային հանրության առաջարկած սկզբունքների նկատմամբ «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի մոտեցումների արմատական տարբերությունն է: Այդ հանգամանքն առավել ազդեցիկ նշանակություն է ստացել այն բանից հետո, երբ Օրենսդիր խորհրդի 2006 թվականի ընտրություններում հաղթեց «Համաս»-ը և կառավարություն ձևավորելու իրավունք ստացավ: Թեև հակամարտության կարգավորման տեսակետից այդ շարժումների նպատակը նույնն է, սակայն դրան հասնելու ուղիների վերաբերյալ «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի տարաձայնությունների հաղթահարումը անհրաժեշտ պայման է վերջնական արդյունքի հասնելու համար:

Բանալի բառեր
պառակտում, Համաս, Ֆաթհ, Պաղեստին, պաղեստինաիսրայելական հակամարտություն

Նախաբան

2006 թվականի սկզբին Պաղեստինում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում պաղեստինյան ամենամեծ խմբավորումների՝ «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև կտրուկ բևեռացում տեղի ունեցավ, որը վերաճեց համընդհանուր՝

աշխարհագրական, քաղաքական, սոցիալական և ինստիտուցիոնալ պառակտման: Շարժումներիտ արաձայնությունների արմատներն ու պառակտման պատճառները պետք է փնտրել գաղափարների, շահերի և օրակարգերի այն տարբերությունների մեջ, որոնք հանգեցրին դիմադրության մեթոդների, ինչպես նաև հարևան երկրների և Իսրայելի հետ հարաբերությունների շուրջ տարաձայնության, քանի որ «Ֆաթհ»-ը ներկայացնում և առաջնորդում է «արաբական ազգային», իսկ «Համաս»-ը՝ «արդի» կրոնական թևը: «Ֆաթհ»-ը՝ լինելով ՊԱԿ-ի կազմավորումներից մեկը, իր պայքարն ավելի համընդհանուր է վարում, քանի որ այն ավելի մոտ է աշխարհիկ մտածելակերպին և ազգային պայքարի հարցում նույնակարծիք է ՊԱԿ-ի մյուս կազմավորումների հետ, ի տարբերություն «Համաս»-ի, որն ունի մյուս ազգային կազմավորումների մոտեցումների հետ չհամընկնող կրոնական գաղափարախոսություն: «Համաս»-ը մերժում է խաղաղ կարգավորման գաղափարը և հրաժարվում է Իսրայելի հետ բանակցությունների սեղանի շուրջ նստել, շարունակաբար մերժում է պաղեստինյան խնդրի լուծման 1948թ. մինչ այսօր առաջարկված տարբերակները և լուծումը տեսնում է զինված պայքարի միջոցով: «Ֆաթհ» և «Համաս» շարժումների պատկերացումները խաղաղության գործընթացի և Պաղեստինյան Ինքնավարության վերաբերյալ արմատապես միմյանց հակասում են, ինչը հանգեցրել է շարունակական քաղաքական տարաձայնությունների, որոնք սկիզբ են առել 1987 թվականին «Համաս»-ի ձևավորման պահից՝ «Քարերի ինթիֆադայից» սկսած: Տարաձայնությունն էլ ավելի խորացավ 2006 թվականին, երբ թեև «Համաս»-ը պաղեստինյան Օրենսդիր խորհրդի[1] ընտրություններում դրանց մասնակիցների ձայների

[1] Օրենսդիր խորհուրդն, ըստ Օսլոյի համաձայնագրերի, կարող է օրենքներ ընդունել միայն Իսրայելի համաձայնությամբ: Այն համարվում է Պաղեստինյան ինքնավարության խորհրդարանը և ընտրվում է Հորդանանի արևմտյան ափի, Գազայի հատվածի և Արևելյան Երուսաղեմի արաբ բնակչության կողմից: Օրենսդիր խորհրդի 132 պատգամավորները ինքնաբերաբար մտնում են Պաղեստինի ազգային խորհրդի կազմի մեջ,

մեծամասնությունը ստացավ, սակայն շարժմանը թույլ չտրվեց իշխանության մեջ առաջատար դիրքերի հասնել: Ճիշտ է, պաղեստինյան երկու շաժումների վերոհիշյալ տարաձայնությունների առկայությամբ էլ պաղեստինյան նպատակը մնում է նույնը և համախմբում է բոլոր պաղեստինյան խմբավորումներին՝ այդ թվում «Համաս»-ին: Սակայն արդյո՞ք նպատակի միասնությունը խթան կհանդիսանա պաղեստինցիների համար, որպեսզի հասնեն հաշտության:

Երկու շարժումների տարաձայնությունները

Գաղափարական տարաձայնությունները: «Ֆաթհ» շարժման քաղաքական միտքը հիմնված է Իսրայելի հետ հակամարտության ազգային բնույթի վրա: Այն իրեն համարում է համապաղեստինյան ազգային շարժում՝ առանց գաղափարախոսական որևէ հստակ ուղղվածության: Դա շարժմանը ճկունություն է հաղորդում և թույլ է տալիս բազմաթիվ փոփոխություններ իրականացնել՝ ելնելով հակամարտության կոնկրետ փուլի պահանջներից և Պաղեստինյան հարցի շուրջ ստեղծված հանգամանքներից: Դա ակնհայտորեն երևում է շարժման՝ նախքան Օսլոյի համաձայնագրերն ունեցած սկզբունքների ու ծրագրերի և 2009 թվականին գումարված վեցերորդ կոնֆերանսում հաստատված ծրագրի համեմատությունից:[2]

որը կազմված է 600 պատգամավորից և հանդիսանում է բոլոր պաղեստինցիների ներկայացուցչական մարմինը՝ ներառյալ սփյուռքում և գրավյալ տարածքներում բնակվողները:

[2]- بشير موسى صالح نافع. الإسلاميون الفلسطينيون والقضية الفلسطينية 1950-1980، مركز فلسطين للدراسات والبحوث، غزة، 1999، ص. 149-151.

- عمر رشاد سليم ناصر. حركة فتح الإشكاليات والتحديات. أطروحة لنيل درجة الماجستير جامعة النجاح الوطنية. 2015. ص. 25-27.

«Համաս» շարժման քաղաքական միտքը հիմնվում է կրոնական սկզբունքների վրա[3], ինչն արտացոլված է շարժման կանոնադրության մեջ[4]: Այն Պաղեստինի սահմանումը նույնպես տալիս է զուտ կրոնական ձևակերպումներով. «Պաղեստինի տարածքն իսլամական անվիճելի սեփականություն է, որը մինչև Ահեղ Դատաստան պատկանում է մուսուլման սերունդներին: Այդ տարածքի կամ նրա մի մասի զիջումը կամ դրանից հրաժարվելը ճիշտ չէ, և ոչ ոք չունի դրա իրավունքը»[5]: Շարժումը ներկայումս Պաղեստինում տիրող իրավիճակը դիտարկում է որպես խաչակրաց արշավանքների շարունակություն իսլամական տարածքներում[6]: Այս սկզբունքներից ելնելով «Համաս»-ը հրաժարվեց ընդունել Իսրայել պետությունը ճանաչելու մասին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242 և 338 բանաձևերը, շարունակեց դիմադրությունը և հրաժարվեց մասնակցել բանակցային գործընթացին՝ պնդելով, որ Պաղեստինյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված միջազգային կոնգրեսներն ու խաղաղ լուծումները հակասում են «Համաս»-ի համոզմունքներին և չեն կարող պաղեստինյան ժողովրդի շահերից բխող արդյունքների հանգեցնել:[7]

---

[3] **Brown Nathan J.,** The Hamas-Fatah Conflict: Shallow but Wide. *The Fletcher Forum of World Affairs*. **34,** 2, summer 2010, 41-56.

[4] Կանոնադրության 11-րդ հոդվածը՝
http://palestine.paldf.net/Uploads/pdf/%D9%85%D9%8A%D8%AB%D8%A7%D9%82-%D8%AD%D8%B1%D9%83%D8%A9-%D8%A7%D9%84%D9%85%D9%82%D8%A7%D9%88%D9%85%D8%A9-%D8%A7%D9%84%D8%A7%D8%B3%D9%84%D8%A7%D9%85%D9%8A%D8%A9-%D8%AD%D9%85%D8%A7%D8%B3.pdf

[5] նույն տեղում:

[6] **Andrea Nüsse,** Muslim Palestine: The Ideology of Hamas. Routledge Curzon. London. 2002, p.3

[7]- حركة المقاومة الإسلامية حماس: دراسات في الفكر والتجربة. تحرير: د.محسن محمد صالح. الطبعة الثانية، 2015. صفحة 51-528

- ميثاق حماس- المادة 13، ص. 4-5.

http://palestine.paldf.net/Uploads/pdf/%D9%85%D9%8A%D8%AB%D8%A7%D9%82-%D8%AD%D8%B1%D9%83%D8%A9-%D8%A7%D9%84%D9%85%D9%82%D8%A7%D9%88%D9%85%D8%A9-

Օսլոյի համաձայնագրի, դրանից բխող համաձայնագրերի և խաղաղ գործընթացի մերժումն էլ ավելի խճճեց «Համաս»-ի և Պաղեստինյան Ինքնավարության միջև առկա խնդիրները: «Համաս»-ը մի կողմից դիմակայում է Իսրայելին՝ մերժելով այդ պետության գոյությունը և ընդլայնելով ռազմական գործողություն-ները դրա դեմ՝ ինչպես Պաղեստինյան Ինքնավարության ազդեցության տարածքներում, այնպես էլ Իսրայելում: Իսկ մյուս կողմից՝ այն ընդդիմանում է Պաղեստինյան Ինքնավարությանը, դրա կողմնորոշումներին, գաղափարներին և գործողություններին: «Համաս»-ի դիրքորոշման պատճառով մի շարք բարդություններ առաջացան Շարժման և Ինքնավարության միջև, որն իրեն ուղղված յուրատեսակ մարտահրավեր և ՊԱԿ-ի ու դրա խմբավորումների վարած քաղաքականությունից շեղում էր տեսնում Շարժման գործողություններում, հատկապես՝ Իսրայելի դեմ զինված պայքարի հարցում: Դա Ինքնավարությանը ստիպեց 1996թ. «Համաս»-ը օրենքից դուրս կազմակերպություն հայտարարել: Շարժման շարքերում լայնամասշտաբ ձերբակալություններ կատարվեցին, փակվեցին խմբավորմանը պատկանող բազմաթիվ հաստատու-թյուններ և միություններ, սառեցվեցին դրանց ակտիվները: Գործը հասավ նրան, որ բազմաթիվ առաջնորդներ ձերբակալվեցին, իսկ 1998թ. նույնիսկ տնային կալանքի ենթարկվեց Շարժման հիմնադիր շեյխ Ահմադ Յասինը: Արդյունքում Ինքնավարության և Շարժման միջև հարաբերությունները դարձան մշտապես միտված դեպի լարվածություն և տարաձայնություն, իսկ 2006թ. խորհրդարա-նական ընտրություններից հետո հասան զինված դիմակայության աստիճանի, դրա հետևանքով՝ պաղեստինյան պառակտման և Գազայի հատվածում «Համաս»-ի իշխանության հաստատման, որն էլ հանգեցրեց Արևմտյան ափին և Գազայի հատվածում պաղես-տինյան պետության ստեղծման նախագծի:

%D8%A7%D9%84%D8%A7%D8%B3%D9%84%D8%A7%D9%85%D9%8A%D8%A9-%D8%AD%D9%85%D8%A7%D8%B3.pdf

- وثيقة المبادئ والسياسات العامة لحركة حماس 2017.

Շահերի բախում: Պաղեստինում «Ֆաթհ» շարժման և «Մուսուլման եղբայրներ»-ի միջև բազմաթիվ տարաձայնություններ կային դեռևս նախքան «Համաս»-ի ստեղծումը, որը «Մուսուլման եղբայրներ»-ի շարունակությունն է համարվում[8]: Մասնավորապես, 1985 թվականին Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը՝ ձգտելով վերահսկողություն հաստատել պաղեստինյան հաստատություններում, փորձեց ձևավորել այդ ժամանակահատվածում «Մուսուլման եղբայրներ»-ի հենակետ հանդիսացող Իսլամական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը՝ որպես նախագահ առաջարկելով պաղեստինցի բժիշկ, հասարակական և քաղաքական գործիչ Հայդար Աբդ ալ-Շաֆիի թեկնածությունը, որը մերժվեց Իսլամական խորհրդի և Գազայի հատվածում «Մուսուլման եղբայրներ»-ի հասարակական ճակատի կողմից:

1987 թվականին առաջին Ինթիֆադայի բռնկումից հետո ՊԱԿ-ը ձգտում էր իր ձեռքում կենտրոնացնել գործողությունների ղեկավարումը՝ բոլոր խմբավորումների մասնակցությամբ: Ինթիֆադայի հրապարակային պայքարը կառավարելու նպատակով այն ստեղծեց «Միացյալ ազգային առաջնորդություն»-ը և ձգտեց ներգրավել նաև «Համաս»-ին: Սակայն «Համաս»-ը հրաժարվեց ներգրավվել և գերադասեց անջատ գործել: Այն փորձեց ՊԱԿ-ի առաջարկած ծրագրին այլընտրանքային ծրագիր առաջարկող մի նոր հոսանք դառնալ[9]:

«Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև մրցակցությունը Ինթիֆադայի ընթացքում վտանգավոր բնույթ ստացավ: Ուստի երկու շարժումները ստիպված եղան դիմել երկխոսության և գործողությունների կոորդինացման: Այս համաձայնությամբ փաստացիորեն ճանաչվեց «պաղեստինյան փողոցում» «Համաս»-ի ունեցած հեղինակությունը: Սակայն, «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև հարաբերություններն ավելի սրվեցին այն բանից հետո, երբ 1988 թվականին

---

[8] **Jean-Pierre Filiu**, Origins of Hamas: Militant Legacy or Israeli Tool? *Journal of Palestine Studies*, **41**, 3, Spring, 2012, 54-70.

[9] **Graham Usher**, The Democratic Resistance: Hamas, Fatah, and the Palestinian Elections. *Journal of Palestine Studies*, **35**, 3, Spring, 2006, 19-36.

ՊԱԿ-ն ընդունեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242 և 338 բանաձևերն ու անկախության փաստաթուղթը: «Համաս»-ը դա ընկալեց որպես շեղում պայքարի ուղուց: Այդուհանդերձ, 1992 թվականի հուլիսին ստորագրվեց «Պատվո փաստաթուղթ», որը ներառում էր երկու խմբավորումների միջև հարաբերությունների հաստատման հիմքերը, յուրաքանչյուր խմբավորման՝ գաղափարական և քաղաքական գործունեության իրավունքը և հռչակում «Համաս»-ի ու «Ֆաթհ»-ի միջև տարաձայնությունների լուծման համար կառուցողական երկխոսության մեկնարկը: Շուտով դրան հետևեց խնդրի լուծմանն ուղղված ևս մեկ քայլ: 1993 թվականի սկզբին, Մադրիդի հրապարակային բանակցություն-ներին և Օսլոյի գաղտնի հանդիպումներին զուգահեռ, սուդանցի հայտնի մտավորական և քաղաքական գործիչ Հասան ալ-Թուրաբիի հովանու ներքո Խարտումում նիստ գումարվեց ՊԱԿ-ի և «Համաս»-ի ղեկավարությունների միջև երկխոսություն հաստա-տելու նպատակով, որը ՊԱԿ-ի կողմից պաղեստինյան ժողովրդի միակ ներկայացուցիչը լինելու իրավունքի հաստատման փորձ էր: Սակայն այդ երկխոսությունը շոշափելի արդյունքներ չտվեց: «Համաս» շարժումը ՊԱԿ-ից պահանջեց լքել Մադրիդի գագաթ-նաժողովը, իր համար Ազգային ժողովում տեղերի 40 տոկոս ապահովել և ՊԱԿ-ի ծրագրում էական փոփոխություններ կատարել: Երկու շարժումների միջև բացահայտ տարաձայնություն առաջացավ ՊԱԿ-ի կառույցում «Համաս»-ի ներկայացուցչության շուրջ[10]: Սակայն դիմակայությունը դրանով չավարտվեց: «Համաս»-ը հրաժարվեց ընդունել 1993 թվականին ստորագրված Օսլոյի համաձայնագիրը՝ այն պաղեստինյան իրավունքների զիջում համարելով: Հրաժարվեց նաև հաստատել ՊԱԿ-ի՝ պաղեստինյան ժողովրդի ներկայացուցիչ լինելը, ինչն, ըստ «Համաս»-ի, չէր արտացոլում պաղեստինյան իրականությունը: Չնայած շարժումը որդեգրել էր Օսլոյի համաձայնագրի արդյունքում ստեղծված Պաղեստինյան Ինքնավարության հետ համակեցության սկզբունքը,

---

[10] عواد جميل عبد القادر عودة، اشكالية العلاقة بين حركة فتح وحركة حماس ... ص. 137.

սակայն հրապարակայնորեն հայտարարեց, որ վիճարկում է Պաղեստինյան Ինքնավարության օրինականությունը և համարում է վերջինիս ստեղծումը պաղեստինյան իրավունքների խախտում: Մյուս կողմի պատասխան քայլերը չուշացան: «Ֆաթհ»-ը՝ ստանձնելով Պաղեստինյան Ինքնավարության ղեկավարությունը, տարբեր մակարդակներով ճնշում գործադրեց «Համաս»-ի վրա՝ գործունեության սահմանափակ ասպարեզ թողնելով, ինչը թույլ էր տալիս Իսրայելի հետ բանակցություններում վերջինիս օգտագործել որպես մարտավարական խաղաթուղթ:

Քեմփ Դեյվիդի կոնֆերանսի (1999-2000թթ.) ձախողումից, 2000 թվականին Ալ-Ակսայի Ինթիֆադայի բռնկումից և դրա ճնշելուն ուղղված իսրայելական գործողությունների ակտիվանալուց հետո «Համաս»-ը և «Ֆաթհ»-ը ստիպված էին մոռանալ տարաձայնությունները: Երկու շարժումները միավորվեցին իսրայելական ուժերին դիմակայելու համար: Սակայն այդ մթնոլորտը ճանապարհ բացեց Պաղեստինի ղեկավարության վրա արտաքին ճնշում գործադրելու համար, որպեսզի այն 2003 թվականին ներգրավվի ճանապարհային քարտեզի կազմման բանակցություններում:

2004թ. նոյեմբերի 11-ին Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթի մահը շրջադարձային էր: Նրա հեղինակության շնորհիվ նույնիսկ այն կազմակերպությունները, որոնք տարաձայնություններ ունեին Արաֆաթի հետ, հիմնականում չէին հակադրվում նրան[11]: ՊԱԿ-ի բանակցային դիրքերն ամրապնդելու նպատակով նախագահ Յասեր Արաֆաթը ճկունորեն օգտագործում էր «Համաս»-ի դիրքորոշումը և խուսափում էր վերջինիս և «Ֆաթհ»-ի քաղաքական պլատֆորմների միջև բախումից: Մինչդեռ նախագահ Մահմուդ Աբբասի դիրքորոշումն ավելի հստակ էր և միջոցների որդեգրման, և Իսրայելի դեմ ռազմական գործողությունների մերժման հարցում: Չնայած նախագահ Աբու Մազենը «Համաս»-ին Պաղեստինյան Ինքնավարության քաղաքական համակարգի և

[11] سمير الزبن، تحولات التجربة الفلسطينية "المشكلات البنيوية للنظام السياسي"، مركز الغد العربي للدراسات، عمّان، 2005. ص. 65-77.

հաստատությունների մեջ ներգրավելու ուղղություն էր վերցրել, նա չկարողացավ կազմակերպության հետ փոխզիջումային համաձայնության հասնել, ինչը հետագայում անդրադարձավ երկու շարժումների փոխհարաբերությունների վրա, երբ «Համաս»-ը օրենսդրական մարմնի ընտրություններում հաղթանակից անմիջապես հետո մտավ պաղեստինյան քաղաքական համակարգի մեջ:

Շարժումների միջև հակասությունների հետագա խորացումը

2005 թվականի նախագահական ընտրություններում Աբու Մազենի հաղթելուց ընդամենը երկու ամիս անց «Համաս»-ը հայտարարեց օրենսդրական մարմնի ընտրություններին մասնակցելու իր որոշման մասին: Նախընտրական քարոզարշավի ժամանակ շարժումը կոչ արեց քաղաքական ուժերին և խմբավորումներին՝ ստեղծել մեկ իշխանություն և պայքարի մեկ օրինական միջոց[12]: Շուտով՝ 2006 թվականի հունվարի 25-ին, պաղեստինյան խորհրդարանական ընտրություններում «Համասը» հաղթեց, ստացավ 132 տեղերից 76-ը միայնակ կառավորարություն ձևավորելու հնարավորություն:

Երկու շարժումների միջև հակասություններն էլ ավելի սրվեցին, երբ նախագահ Աբու Մազենը կոչ արեց «Համաս»-ին կառավարության հայտարարության մեջ նշել, որ ճանաչում է ՊԱԿ-ի հեղինակությունը և հավատարիմ է կազմակերպության ստորագրած բոլոր համաձայնագրերին: Ի պատասխան, «Համաս»-ը շեշտեց, որ անհրաժեշտ է ՊԱԿ-ը վերակազմավորել այնպես, որ այն պաղեստինյան տարբեր ուժեր ներառի: «Համաս»-ը հրաժարվեց ճանաչել միջազգային քառակողմ հանձնաժողովի պայմանները, Օսլոյի պայմանագրերը և Իսրայել պետությունը: Իսրայելը, ԱՄՆ-ն և միջազգային հանրությունը ֆինանսական շրջափակման մեջ դրեցին «Համաս»-ի կառավարությունը:

---

[12] **Tavishi Bhasin & Maia Carter Hallward,** Hamas as a Political Party: Democratization in the Palestinian Territories, *Terrorism and Political Violence*, 2013, **25**, 1, 87-88.

«Համաս»-ի կառավարության շրջափակումը ծանր ֆինանսական ճգնաժամի հանգեցրեց, որի հետևանքով համասական պաշտոնյաներին աշխատավարձ չվճարվեց: Պաղեստինյան Ինքնավարության հաստատությունների՝ հատկապես անվտագության ծառայությունների աշխատակիցներից շատերը հրաժարվեցին համագործակցել «Համաս»-ի կառավարության հետ՝ հիմնականում վերջինիս ներկայացուցիչներից կազմված օրենսդիր ուժ ձևավորելու հարցում[13]: Այս իրավիճակն է՛լ ավելի բարդացրեց պաղեստինյան քաղաքական համակարգի երեք իշխող ուժերի փոխհարաբերությունները՝ տեքստերի երկիմաստության և լիազորությունների սահմանման մեջ հստակության բացակայության պատճառով[14]: Այդուհանդերձ, մի քանի ամիս անց՝ 2006 թվականի մայիսին Ազգային համաձայնության «Բանտարկյալների փաստաթղթի» հռչակումը պաղեստինյան քաղաքական ասպարեզում առկա լարվածության դադարեցման նպատակ էր հետապնդում՝ կոչ անելով բոլոր խորհրդարանական դաշինքների մասնակցությամբ ազգային միասնության կառավարություն ձևավորել, կառավարության և նախագահի միջև համագործակցություն հաստատել, անվտանգության ծառայությունները բարեփոխել և սահմանափակել բանակցելու իրավասությունը՝ այն ՊԱԿ-ին և Ինքնավարության նախագահին վերապահելով: Փաստաթուղթն ազգային միասնության կոչ էր անում՝ դիմակայելու համար Միացյալ Նահանգների և Իսրայելի պարտադրած շրջափակմանը[15]: Չնայած «Բանտարկյալների փաստաթղթի» հռչակումով, որը խմբագրումից հետո հայտնի դարձավ որպես «Ազգային համաձայնության

---

[13] Graham Usher, նշվ. աշխ.

[14] سرائيل تزيل أعلامها وتنسحب وأبناء القطاع يحتفلون بالمستوطنات. *صحيفة القدس العربي*، العدد 5069، 2005/9/12، ص 1.

[15] علاء الدين خليل محمد المشهراوي. الآثار السياسية والأمنية للانسحاب الإسرائيلي من قطاع غزة. (دراسة تحليلية للنواحي السياسية والأمنية لواقع الانسحاب الإسرائيلي في أيلول 2005) بحث تكميلي للحصول على درجة الماجستير في العلوم السياسية 2013 صفحة 47-63.

փաստաթուղթ», չհաջողվեց հաշտության հասնել, սակայն այն հաստատեց ազգային միասնության կառավարության սկզբունքը: Հաշտության ուղղությամբ ևս մեկ քայլ արվեց մի քանի ամիս անց՝ 2007 թվականի հունվարին, երբ Մեքքայում «Ֆաթհ»-ը և «Համաս»-ը համաձայնագիր ստորագրեցին ազգային միասնության կառավարություն ձևավորելու մասին, որից անմիջապես հետո նախագահ Աբու Մազենը կրկին հանձնարարեց Իսմայիլ Հանիյեին՝ ձևավորել ազգային միասնության կառավարություն: Մեքքայի համաձայնագիրն ընդգծեց նաև Պաղեստինի «արյան սրբությունը» և զինված գործողությունների կանխմանն ուղղված բոլոր հնարավոր միջոցների և քայլերի իրականացման անհրաժեշտությունը: Բաշխվեցին նախարարական պորտֆելները և նշանակվեցին ազգային միասնության կառավարության նախարարները[16]: Թեև Մեքքայի համաձայնագիրը լրացուցիչ մանրամասներ ավելացրեց միասնական կառավարություն ձևավորելու վերաբերյալ նախորդ համաձայնագրերին, այնուամենայնիվ, հիմնական բարդությունը կապված էր դրա քաղաքական ծրագրի և միջազգային հանրության պահանջները չընդունելու հետ, ինչը նշանակում էր, որ Գազայի հատվածի շրջափակումը շարունակվելու էր: «Համաս»-ը սխալվել էր միջազգային որոշումների և Անվտանգության խորհրդի թիվ 242 և 338 բանաձևերի մերժման հարցում[17]:

Չնայած Մեքքայի համաձայնագրի հիման վրա ազգային միասնության կառավարության ձևավորմանը, փողոցային բախումների շրջանակներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով Գազայի հատվածն ամբողջությամբ: Եգիպտոսի անվտանգության պատվիրակությունը մի քանի անգամ միջամտեց հրադադարի համաձայնության հասնելու համար, սակայն «Համաս»-ը բացարձակ վերահսկողություն էր սահմանել Գազայի հատվածի վրա և անվտանգության ծառայությունների համար զենքը հանձնելու վերջնաժամկետ էր

---

[16] إعلان القاهرة، مركز المعلومات الوطني الفلسطيني. 2005
https://www.alwatanvoice.com/arabic/news/2005/03/17/18737.html

[17] **Daniel E. Price**, Sacred Terror: How Faith Becomes Lethal. Contributors: Praeger. Santa Barbara, CA. 2012. P. 3

նշանակել 2007 թվականի հունիսի 15-ը: Երբ նախագահ Աբու Մազենը հուլիսի 14-ին արտակարգ դրություն հայտարարեց և հրամանագիր ստորագրեց միասնության կառավարությունը լուծարելու և Արևմտյան ափին Սալամ Ֆայյադի ղեկավարությամբ նոր կառավարություն ստեղծելու մասին, «Համաս»-ը հրաժարվեց ընդունել նախագահի որոշումը: Այդուհանդերձ, 2008 թվականի վերջին Գազայի հատվածում իսրայելական ռազմական գործողությունները դրդեցին «Ֆաթհ»-ին և «Համաս»-ին մեկ տարուց ավել տևած խզումից հետո վերականգնել երկխոսությունը: Պաղեստինյան խմբավորումները 2009 թվականի փետրվարի 26-ին Եգիպտոսի հովանու ներքո ժողով գումարեցին Կահիրեում և պայմանավորվեցին ձևավորել հինգ հանձնաժողով, որոնք պետք է քննարկեին խնդիրների հինգ փաթեթներ՝ անվտանգության, ընտրությունների, ՊԱԿ-ի, անցումային կառավարության և հանրային հաշտեցման: Երկխոսության ընթացքում «Ֆաթհ» շարժումը կենտրոնացել էր այնպիսի կառավարություն ձևավորելու անհրաժեշտության վրա, որը կկարողանար հարաբերվել միջազգային պահանջների հետ, որպեսզի ապահովեր շրջափակման վերացումը և նախագահական ու Օրենսդիր խորհրդի ընտրությունների անցկացումը: Մինչդեռ «Համաս» շարժումը կենտրոնացել էր այն բանի վրա, որ հաշտեցումը լիներ համապարփակ, լուծվեին վերոնշյալ հինգ խնդիրները, մեկ ամբողջական փաթեթով իրականացվեր այն ամենն, ինչի շուրջ համաձայնություն էր ձեռք բերվելու, ազատ արձակվեին Ինքնավարության կողմից ձերբակալված իր անդամները, մերժվեին քառակողմ հանձնաժողովով ներկայացված արտաքին ճնշումները: Քննարկումների արդյունքում ձևավորվեց «Եգիպտական փաստաթուղթը», որը հրապարակվեց 2009 թվականի հոկտեմբերի 15-ին և առաջարկում էր այնպիսի մանրամասներ, որոնք չէին ներառվել նախկին համաձայնագրերից և ոչ մեկում: Այն նախորդ պայմանավորվածությունների համեմատ առաջընթաց քայլ համարվեց, քանի որ վեց հիմնական հոդվածներում անդրադառնում էր համաձայնեցված գլխավոր սկզբունքների իրականացման ընթացակարգին, երկու

շարժումների միջև տարաձայնությունների մեծ մասի լուծմանը: Ընդ որում, «Ֆաթհ» և «Համաս» շարժումներից պահանջվում էր փաստաթուղթը ստորագրել առանց դրանում որևէ փոփոխություն մտցնելու:

Փաստաթղթի առաջին հոդվածը վերաբերում էր ՊԱԿ-ի ակտիվացմանը և զարգացմանը, երկրորդը՝ օրենսդրական, նախագահական և խորհրդարանական համաժամանակյա ընտրությունների անցկացմանը, երրորդը՝ անվտանգությանը՝ մի շարք ընդհանուր սկզբունքների հիման վրա, որպեսզի անվտանգության մարմինները լինեն ոչ թե զինյալներից կազմված, այլ պրոֆեսիոնալ: Այդ հոդվածն անդրադառնում էր նաև այդ մարմինների առաքելությանն ու գործառույթներին: Չորրորդ հոդվածը վերաբերում էր ազգային հաշտեցման խնդրին՝ նպատակների սահմանման և դրանք իրականացնելու մեխանիզմների առումով: Հինգերորդ հոդվածը վերաբերում էր Ազգային համաձայնության համաձայնագրի իրականացման համար միասնական հանձնաժողովի ձևավորմանը և Արևմտյան ափին ու Գազայի հատվածում Ինքնավարության ինստիտուտների միավորմանը: Վեցերորդ հոդվածն արգելում էր քաղաքական պատկանելության հիման վրա ձերբակալությունները և ներառում էր երկու կողմերի կալանավորների հարցը լուծելու մեխանիզմներ[18]: Փաստաթղթի վերաբերյալ «Համաս» շարժման վերապահումները խանգարեցին դրա ստորագրմանը, և Եգիպտոսը երկխոսության նոր փուլ կազմակերպեց՝ դրանք քննարկելու համար: Առաջին նիստը գումարվեց Դամասկոսում 2010 թվականի սեպտեմբերի 24-ին, որի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց ընտրական հանձնաժողով և ընտրական դատարան ձևավորելու և մինչև ՊԱԿ-ի վերակառուցումը ժամանակավոր ղեկավար կառույց կազմավորելու վերաբերյալ: Անվտանգության ծառայությունների և վերակազմավորման համար պատասխանատու կոմիտեի հարցերի շուրջ

---

[18] صراع الصلاحيات وغياب المسؤوليات في السلطة الوطنية الفلسطينية، تقرير المؤتمر السنوي الثالث للائتلاف من أجل النزاهة والمساءلة أمان، 2007/3/4، ص 25.

համաձայնություն ձեռք չբերվեց նույնիսկ Դամասկոսում տեղի ունեցած հաջորդ հանդիպման ժամանակ: Հանդիպումների մյուս շարքի ընթացքում, որը տեղի ունեցավ 2011 թվականի մարտին և ապրիլին, «Համաս»-ը և «Ֆաթհ»-ը ստորագրեցին հանձնաժողովների ստեղծման մասին եգիպտական փաստաթուղթը, սակայն Միասնության կառավարության քաղաքական ծրագրի շուրջ հիմնական տարաձայնությունը մնաց չլուծված:

2011 թվականի սեպտեմբերին Ինքնավարության դիմումն ուղղված Միավորված ազգերի կազմակերպությանը՝ Պաղեստին պետությանը լիիրավ անդամակցություն տրամադրելու խնդրանքով, և «Համաս»-ի կողմից բանտարկյալների փոխանակման գործարքն ավարտին հասցնելը դրական մթնոլորտ ստեղծեցին երկխոսության վերսկսման համար: Նոյեմբերի 23-ին Կահիրեում հանդիպում տեղի ունեցավ նախագահ Աբու Մազենի և «Համաս»-ի քաղաքական բյուրոյի ղեկավար Խալիդ Մաշալի միջև, որի ընթացքում երկու կողմերը հայտարարեցին որպես գործընկերներ իրենց համատեղ աշխատանքի մասին[19]: Երկու շարժումները համաձայնեցին նաև Կահիրեում կայանալիք հաջորդ հանդիպման ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ստեղծել: Հաջորդ քայլն արվեց 2012 թվականի փետրվարին, երբ հանդիպեցին երկու հանձնաժողովներ, մեկը Արևմտյան ափին, իսկ մյուսը՝ Գազայի հատվածում, հանրային ազատությունների և վստահության մթնոլորտի ստեղծման, օրենսդրական խորհրդի ակտիվացման վերաբերյալ խնդիրներին լուծում տալու համար: Սակայն կառավարության ծրագրի շուրջ տարաձայնությունը շարունակեց խոչընդոտել հաշտեցմանը, ինչը ստիպեց Կատարի Էմիրին Դոհայում հանդիպում անցկացնել նախագահ Աբու Մազենի և «Համաս»-ի քաղբյուրոյի ղեկավար Խալիդ Մաշալի միջև, որի արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համաձայնագիր կնքել Աբու Մազենի գլխավորությամբ ազգային համաձայ-

[19] وثيقة الأسرى للوفاق الوطني 2006، مركز المعلومات الوطني الفلسطيني.
http://info.wafa.ps/ar_page.aspx?id=4937

նության կառավարության ձևավորման վերաբերյալ, ինչը դիտարկվեց որպես քաղաքական ծրագրի շուրջ համաձայնության գալու ճգնաժամից ելք[20]: Սակայն այդ կառավարությունը նույնպես կյանքի չկոչվեց:

Նոր խնդիրներ ծագեցին Սիրիական ճգնաժամի ընթացքում: «Համաս»-ը հրաժարվեց աջակցել սիրիական վարչակազմին, շարժման ղեկավարությունը դուրս եկավ սիրիական տարածքից և փակեց իր գլխավոր շտաբը: 2013 թվականի հունիսին Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ»-ի իշխանության տապալումից հետո եգիպտական նոր իշխանությունները «Համաս»-ի դեմ խիստ միջոցների դիմեցին, քանի որ վերջինս սատարում էր «Եղբայրներին»: Էլ ավելի խստացավ Գազայի հատվածի շրջափակումը, շարժումը հայտնվեց սուր ճգնաժամի մեջ, և դրա շարքերում ուժեղացան հաշտության ձգտող չափավոր ուժերը: Այդ ամենի արդյունքում «Համաս»-ը կորցրեց երկար տարիներ իր աջակցության հիմնական աղբյուր հանդիսացած կարևորագույն երկու դաշնակիցների՝ Սիրիային և Եգիպտոսին, ինչն էլ նպաստեց 2014 թվականի ապրիլի 23-ին «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև «Ալ-շատի»-ի համաձայնագրի[21] ստորագրմանը[22]: Համաձայնագրի և հաշտեցման մեկնարկի մասին հայտարարությունը ջերմորեն ընդունվեց թե՛ ժողովրդի, թե՛ խմբավորումների կողմից: Համաձայնություն ձեռք բերվեց բազմաթիվ գործնական քայլերի վերաբերյալ[23]: «Ալ-շատի»-ի համաձայնագիրը իրականացնելու նպատակով նախագահ Աբու Մազենը քայլեր ձեռնարկեց, որպեսզի

---

[20] **Ali Sawafta,** Palestinian rivals agree to form unity government. https://www.reuters.com/article/us-palestinians-government-idUSTRE8150KU20120206

[21] Համաձայնագրի անվանումը կապված է այն բանի հետ, որ բանակցություններն ընթացել են Իսմայիլ Հանիյեի տանը, որը գտնվում էր Գազա քաղաքի արևմուտքում, փախստականների «Ալ-շատի» ճամբարում:

[22] نص اتفاق مكة، مركز المعلومات الوطني الفلسطيني . http://www.wafainfo.ps/ar_page.aspx?id=3654

[23] اعلان بنود المصالحة الفلسطينية من قطاع غزة http://www.bbc.com/arabic/middleeast/2014/04/140423_hamas_fatih_talks

ձևավորի այն կառավարությունը, որի շուրջ պայմանավորվածություն էր ձեռք բերվել: Մուսա Աբու Մարզուկը հայտարարեց, որ եթե նախագահը նման որոշում ընդունի, «Համաս»-ը դեմ չի լինի, որ փոխադարձ համաձայնությամբ ընտրված որևէ մեկը ղեկավարի կառավարությունը՝ ակնարկելով վարչապետ Ռամի ալ-Համդ Ալլահին[24]: Ի վերջո, 2014 թվականի հունիսին, հայտարարվեց Ազգային համաձայնության կառավարության ստեղծման, շարժումների միջև պառակտման վերացման և միասնականության վերականգնման մասին[25]: Իսրայելը խիստ քննադատեց այդ համաձայնագիրը և հայտարարեց, որ մտադիր է Պաղեստինյան Ինքնավարության դեմ պատժիչ միջոցներ ձեռնարկել: Սակայն ԱՄՆ վարչակազմը հաստատեց, որ շարունակելու է օգնություն ցուցաբերել պաղեստինյան համաձայնության կառավարությանը[26]: Թեև նախապես համաձայնեցված էր այդ կառավարության ձևավորումը, սակայն հաշտեցման գործընթացը շարունակում էր խոչընդոտների հանդիպել վստահության բացակայության և շահերի բախման պատճառով, ինչը հանգեցրեց ընդունված պայմանագրի կետերի հակասական մեկնաբանմանը: Գլխավոր տարաձայնությունը, որն առկա էր եղել պառակտման տարբեր փուլերում, կառավարության քաղաքական օրակարգի շուրջ էր: Ըստ «Ֆաթհ» շարժման դիրքորոշման, պաղեստինյան ցանկացած կառավարություն պետք է հավատարիմ լինի ՊԱԿ-ի ստորագրած համաձայնագրերին և պայմանագրերին՝ հաշվի առնելով, որ անցակետերը գտնվում են Իսրայելի վերահսկողության ներքո, և որ վերջինս տնօրինում է մաքսային տուրքերի եկամուտները, որոնք Պաղեստինյան Ինքնավարության եկամուտների զգալի մասն են կազմում: Մինչդեռ, «Համաս»-ը հրաժարվում է ճանաչել Իսրայելը և այդ դիրքորոշումը կանոնադրությանը և գաղափարական համոզմունքներին շարժման հավատարմության բաղկացուցիչ մաս

[24] الورقة المصرية للمصالحة، مركز المعلومات الوطني الفلسطيني.
[25] بيان اتفاق الشاطئ، مركز المعلومات الوطني الفلسطيني.
[26] أبو مرزوق: لن نعارض ترؤس أي شخصية توافقية للحكومة، وكالة صفا، 2014/4/28

է համարվում, թեև շաժման կարծիքով, իր, «Ֆաթհ»-ի և ՊԱԿ-ի հատման կետն ու ընդհանուր ծրագիրը 1967 թվականի սահմաններով պաղեստինյան պետության ընդունումն է:

Անվտանգության հարցն ու դրա ենթահարցերը նախորդ հաշտեցման համաձայնագրերի ձախողման գլխավոր պատճառներից են համարվում: Հաշտեցման վերաբերյալ «Եգիպտական փաստաթուղթը» նախատեսում էր արաբական և պաղեստինյան հանձնաժողով ստեղծել, որը կառավարության ստեղծումից հետո պետք է վերահսկեր անվտանգության ծառայությունների վերակազմավորման գործընթացը Արևմտյան ափին և Գազայի հատվածում: Անվտանգության խնդրի բարդությունն արտահայտվում է մի շարք հարցերում, որոնցից ամենակարևորը անվտանգության ծառայությունների լիազորությունների ու պարտականությունների սահմանումն է և այդ ծառայությունների կառավարման ձևի հստակության բացակայությունը: Գազայի հատվածում անվտանգության ծառայությունները գտնվում են «Համաս»-ի վերահսկողության ներքո և ղեկավարվում են Աբու Մազենի ծրագրով առաջնորդվող կառավարության կողմից[27]: Արևմտյան անվտանգության ծառայությունները գտնվում են «Ֆաթհ» շարժման վերահսկողության ներքո, լայն լիազորություններ ունեն և խստորեն հետևում են Իսրայելի հետ համաձայնագրերով սահմանված պարտավորությունների իրականացմանը: Ինչ վերաբերում է պաղեստինյան խմբավորումների ռազմական թևերի ապագային, ապա նախագահ Աբու Մազենը պահանջել էր լուծարել դրանց մարտական գումարտակները և զինված կազմավորումները, այդ թվում՝ Ալ-Կասսամի գումարտակները: «Համաս»-ը պնդում էր, որ դրանք պետք է անկախ մնան, ինչը հակասում էր միջազգային համաձայնագրերին և պարտավորություններին:

Գազայում նոր աշխատակիցների խնդիրը մեկն է այն խնդիրներից, որոնք դեռևս լուծում չեն ստացել նույնիսկ վերջին՝

---

[27] الرئيس يكلف الحمد الله بتشكيل حكومة الوفاق الوطني، وكالة وفا، 2014/5/29، http://www.wafa.ps/ar_page.aspx?id=KKddPUa642850142814aKKddPU

«Ալ-շատի»-ի, համաձայնագրում: «Համաս»-ը պառակտումից հետո ուներ ավելի քան հիսուն հազար անվտանգության աշխատակիցներ ու քաղծառայողներ: Շարժումը հրաժարվում է նրանց հեռացնել և պահանջում է ընդգրկել Պաղեստինյան Ինքնավարության աշխատակազմի մեջ: «Ֆաթհ»-ը «Ալ-շատի»-ի բանակցությունների ժամանակ դրա վերաբերյալ որևէ պարտավորություն չի ընդունել: «Համաս»-ը դա ընկալում է որպես փոխհատուցում՝ Պաղեստինյան Ինքնավարության կողմից շարժման ներկայացուցիչներին երկար տարիներ մարգինալացնելու և «անվտանգության» անվան տակ կառավարական պաշտոններից զրկելու համար: «Համաս»-ն այդ աշխատակիցների աշխատավարձը վճարում է «Համաս»-ի կառավարության բյուջեից, ինչն էլ կազմում է վերջինիս ամենամեծ ֆինանսական բեռը[28]: Պաղեստինյան Ինքնավարությունը տառապում է բյուջեի դեֆիցիտից և վախենում է, որ չի կարողանա աշխատակիցների աշխատավարձը վճարել, եթե Իսրայելը հրաժարվի փոխանցել հարկային եկամուտները:

«Համաս» շարժումն ընդգծում է Ազգային ժողովի ընտրությունները օրենսդիր մարմնի և նախագահական ընտրությունների հետ միաժամանակ անցկացնելու անհրաժեշտությունը՝ վախենալով պառակտման փորձի կրկնվելուց, քանի որ «Ֆաթհ» շարժումը վերահսկում է ՊԱԿ-ը և Պաղեստինյան որոշումը[29]: ՊԱԿ-ի գործադիր կոմիտեի՝ Ազգային ժողովի ընտրությունների օրինագիծը վավերացնելու մասին որոշումը «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև տարաձայնություն առաջացրեց: Համասը համարեց, որ այն խախտում է Եգիպտոսի հովանու ներքո Կահիրեում խմբավորումների ստորագրած համաձայնագրերը, և որ

---

[28] واشنطن: سنعمل مع الحكومة الفلسطينية الجديدة وسنواصل تقديم المساعدات ، وكالة وفا، 2014/6/2،
http://www.wafa.ps/ar_page.aspx?id=OHxbzra643112826642aOHxbzr

[29] «Պաղեստինյան որոշում» ասելով նկատի է առնվում պաղեստինյան ժողովրդի՝ իր ճակատագրի ինքնուրույն տնօրինումը՝ առանց արաբական երկրների,մասնավորապես՝ Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի և Արաբական երկրների լիգայի կողմից որևէ պարտադրանքի կամ թելադրանքի

օրենքի վավերացումը ոչ թե գործադիր կոմիտեի լիազորությունն է, այլ այն ժամանակավոր ղեկավար օղակի, որի ձևավորման շուրջ համաձայնություն էր ձեռք բերվել, և որի մեջ էին մտնում պաղեստինյան խմբավորումների գլխավոր քարտուղարները[30]:

Հաշտության ապագան

Տարածաշրջանային և միջազգային մի շարք գործոններ ակնհայտորեն նպաստող ազդեցություն են ունեցել պաղեստինյան պառակտման և դրա ձգձգման վրա, ինչը բացասաբար է անդրադարձել Պաղեստինյան հիմնախնդրի լուծման վրա: Մասնավորապես, միջազգային գործոններից կարևորագույնը ամերիկյան գործոնն է, քանի որ ամերիկյան վարչակազմը Պաղեստինյան հիմնախնդրի առնչությամբ Ինքնավարության հետ հարաբերվելիս ձգտում է թելադրել իր մոտեցումները: ԱՄՆ-ն այս հարցում վարում է Իսրայելի քաղաքականությանը համահունչ քաղաքականություն և փորձում է խնդիրը լուծել ի օգուտ վերջինիս, ինչի ցայտուն ապացույցն է ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի՝ ԱՄՆ դեսպանությունը Երուսաղեմ տեղափոխելու մասին որոշումը: Տարածաշրջանային գործոններից հարկ է նշել «արաբական հեղափոխությունների» և դրանից բխած պատերազմների բացասական հետևանքները, ինչպես նաև Կատարի և Թուրքիայի ազդեցությունը «Համաս»-ի վրա, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Հորդանանի ազդեցությունը «Ֆաթհ»-ի վրա:

Հաշտեցումը պաղեստինցիների համար հիմնախնդիրը ճիշտ ուղուն վերադարձնելու միակ տարբերակն է: «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև իրական հաշտեցում կարող է տեղի ունենալ միայն պաղեստինյան քաղաքական ծրագրի նախագծման շուրջ համաձայնության դեպքում, ինչը թույլ կտա լուծել բոլոր բարդ խնդիրները, ինչպիսիք են անվտանգությունը, ՊԱԿ-ը, ընտրություն-

---

[30] الرئيس يعلن إنهاء الانقسام واستعادة وحدة الوطن، وكالة وفا، 2014/6/2، http://www.wafa.ps/ar_page.aspx?id=EHzKyxa643068094251aEHzKyx

ները և դրանցից բխող մյուս հարցերը: «Ալ-շատի»-ի համաձայնագրի՝ Ազատությունների հանձնաժողովի կողմից մի շարք խնդիրներ ավարտին հասցնելու հարցում հաջողությունը պարզապես բարի կամքի նախաձեռնություն է մնում: Համաձայնագիրը հաջողության հասավ պառակտման պատճառով արգելված պաղեստինյան թերթերի փոխանակումը թույլատրելու, անձնագրերի խնդիրը լուծելու, «Ֆաթհ»-ի կադրերին տեղաշարժի ազատություն տալու հարցում, որոնց մուտքը Գազայի հատված պառակտումից հետո արգելվել էր: Համաձայնություն ձեռք բերվեց նաև կառավարության ձևավորումից հետո Գազայի հատվածի բանտերից տասնինը, իսկ Արևմտյան Ափի բանտերից քսանմեկ քաղբանտարկյալների ազատ արձակման հարցում, պառակտումից հետո Գազայի հատվածում տեղի ունեցած իսրայելական հարձակումների զոհերը ճանաչվեցին նահատակներ:

2011 թվականին Կահիրեում կայացած հանդիպման ընթացքում պաղեստինյան խմբավորումները համաձայնվեցին ազատությունների և հանրային հաշտեցման հարցերին հետևելու համար հանձնաժողովներ ստեղծել: Եգիպտոսի վերահսկողության ներքո Արևմտյան ափին և Գազայի հատվածում երկու հանձնաժողով ստեղծվեց՝ ազատությունների հարցերի վարահսկման և վստահության ամրապնդման համար, որոնք, սակայն, մի քանի հանդիպումներից հետո դադարեցրին նիստերը և գործունեությունը վերսկսեցին միայն «Ալ-շատի»-ի համաձայնագրի ստորագրումից հետո: Հանրային հաշտեցման կոմիտեն հետևում է այն ընտանիքների խնդրին, որոնք «Համաս»-ի՝ Գազայի հատված ներթափանցման նախօրեին ներքին պատերազմի ժամանակ կորցրել են իրենց զավակներին: Կահիրեում երկխոսության մեկնարկից ի վեր այդ խնդիրն ուշադրության է արժանացել տուժածներին «արյան գին» վճարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների մշտադիտարկման միջոցով: Կոմիտեն ակտիվացրել է իր գործունեությունը «Ալ-շատի»-ի համաձայնագրի և վաթսուն միլիոն դոլար դրամագլխով Փոխհատուցման հիմնադրամի ստեղծումից հետո:

Եզրակացություն

Պաղեստինյան «Համաս» և «Ֆաթհ» շարժումների հակասությունների, դիմակայության և դրանց հաղթահարման փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

- «Համաս»-ի և «Ֆաթհ»-ի միջև պայքարը շատ ավելի խորն է, քան պարզապես իսրայելա-պաղեստինյան հակամարտության ձևի շուրջ գաղափարախոսական պայքարը: «Համաս»-ը կրոնաքաղաքական շարժում է, որն իր համար որպես կենսակեպ ու սահմանադրություն է ընտրել կրոնը: Նրա քաղաքական ծրագիր»-ը մերժում է Իսրայելի հետ բանակցելու և խաղաղ կարգավորման գաղափարը՝ ինչ գնով էլ դա լինի: Այդ ամենի պատճառով «Համաս»-ը հաժարվել է բանակցային գործընթացի մաս կազմել, քանի որ դրանք ուղղված էին Պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն, իսկ շարժումը խնդրի լուծումը տեսնում է զինված պայքարի միջոցով: Շարժումն իրեն պատասխանատու է համարում Պաղեստինի պաշտպանության համար, ինչը հակասություն է առաջացնում «Ֆաթհ» շարժման հետ, քանի որ վերջինս ՊԱԿ-ի կազմավորումներից մեկն է և կիսում է հիմնախնդրի կարգավորման շուրջ ՊԱԿ-ի որդեգրած քաղաքականությունը:
- «Համաս»-ի հիմնարար փաստաթղթերի համաձայն, շարժումը Պաղեստինյան հիմնախնդրի լուծումը տեսնում է ոչ թե Իսրայելի հետ խաղաղ կարգավորման, այլ Իսրայելին չճանաչելու և ռազմական դիմակայության մեջ: Մինչդեռ «Ֆաթհ»-ը հնարավոր է համարում հիմնախնդրի խաղաղ լուծումը, ժողովրդի խաղաղ դիմադրությունը և Իսրայելի հետ բանակցումը՝ հանուն 1967թ. սահմաններով պետության ստեղծման:
- «Համաս»-ը համարում էր, որ 2006 ընտրություններից հետո պետք էր համաձայնության կառավարություն ձևավորել «Համաս»-ի գլխավորությամբ և Մահմուդ Աբբասի նախագա-

հությամբ՝ հաշտության հասնելու, քաղաքական հալածանքը դադարեցնելու և Ինքնավարության ողջ տարածքում համաժամանակյա և ամբողջական ազատություններ հաստատելու համար, մինչդեռ «Ֆաթհ»-ը չէր ընդունում ընտրությունների արդյունքներն ու պահանջում էր առանց նախապայմանների նոր ընտրություններ անցկացնել:

- «Համաս»-ը դեմ է, որպեսզի Ինքնավարության և Իսրայելի միջև կոորդինացվեն անվտանգության խնդիրները, որոնք անչվում են Իսրայելի դեմ ցանկացած զինված դրսևորման կանխարգելմանը, անվտանգության վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը և դիմակայությանը բոլոր սատարողների հետապնդմանը: Այն պահանջում էր վերջ դնել դրան և աջակցել դիմակայությանը, մինչդեռ «Ֆաթհ»-ը գտնում է, որ այդ կոորդինացումը Օսլոյի համաձայնագրերի մաս է, որը չի կարելի դադարեցնել և անհարժեշտ է շարունակել ըստ Իսրայելի հետ համաձայնագրի:
- Կողմերը փոխադարձ քաղաքական ձերբակալություններ են իրականացնում՝ «Ֆաթհ»-ը Արևմտյան ափում, իսկ «Համաս»-ը՝ Գազայի հատվածում: Կողմերի՝ իրար դեմ ուղղված մեղադրանքները նրանց էլ ավելի է հեռացնում երկխոսության հնարավորությունը:
- «Համաս»-ը պահանջում է ազատականացնել Արևմուտյան ափը՝ իրագործելով հաշտեցման համաձայնագրերը, չխոչընդոտել իր քաղաքական գործունեությանը և սոցիալական հաստատությունների բացմանը, չհետապնդել իր անդամներին, կարծիքի ազատ արտահայտման հնարավորություն տալ բոլորին: Նույն պահանջներն է ներկայացնում նաև «Ֆաթհ»-ը Գազայի հատվածի առնչությամբ, սակայն կողմերն այդ ամենն իրագործելու համար բավականաչափ կամք չունեն:
- «Ֆաթհ»-ը համարում է, որ իշխանությունն ու որոշում ընդունելու իրավունքը պատկանում է Մահմուդ Աբբասին՝ որպես ՊԱԿ-ի և Ինքնավարության ղեկավարի, ինչին դեմ է

«Համաս»-ը: Այս շարժումը պահանջում է լիազորություններով օժտված արդյունավետ ղեկավարություն ձևավորել, որը կներառի բոլորին, ի տարբերություն նախկինում գործող բոլոր այլ մարմինների:

- Պառակտման և դրա հետևանքների վերացմանն ուղղված ջանքերը երկարատև հաջողություն չեն ունեցել, թեև այդ նպատակով իրականացվել է հաշտեցման բազմափուլ գործընթաց և ձևավորվել են տարատեսակ հանձնաժողովներ: Այնուամենայնիվ, չնայած «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև առկա տարաձայնություններին, պաղեստինյան նպատակը շարունակում է մեկը լինել և հենց դա էլ միավորում է պաղեստինյան բոլոր խմբավորումներին, այդ թվում՝ վերոնշյալ երկու շարժումներին:

Conflict Between Fatah and Hamas Movements: Clash of Ideologies and Interests

ABU ZAID ALI MUSSA
Yerevan State University, Armenia

The article discusses one of the key issues in the Palestinian-Israeli conflict stemmed from the disagreement between Palestinian movements Fatah and Hamas, as well as the obstacles and opportunities to overcome them. The basis of these disagreements is the radical difference between Fatah and Hamas' approaches to the principles proposed by the international community for negotiations and settlement with Israel - the other party to the conflict. This has become more important since Hamas won the Legislative Council elections in 2006 and was entitled to form a government. While the purpose of these movements is the same from the point of view of conflict settlement, the overcoming of and disagreements between Fatah and Hamas is a necessary condition for achieving an outcome.